ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/116

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 մարտի 2025 թ. N 116

ԵՐԵՎԱՆԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԲԱԶԱՅԻՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Հերացի 2/1
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ չի ունեցել

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի մարտի 1-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի (այսուհետ՝ քոլեջ, Հաստատություն) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 25 դեկտեմբերի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում՝ 13 մայիսի 2024 թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 19-21 սեպտեմբերի 2024 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 12 նոյեմբերի 2024 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 20 նոյեմբերի 2024 թ.

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագետների կողմից.

- **Յասման Ավագյան՝** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի որակի ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Լիլիթ Աբելյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի որակի պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ:
- **Օլգա Ավետիսյան՝** Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի մասնագիտական առարկաների ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
- **Ամալյա Ստեփանյան՝** Հայաստանի եվրոպական համալսարանի «Մարքեթինգ և կառավարում» բաժնի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարարում է

Հանձնաժողովը, ուսումնասիրելով քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ հաստատության համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Քոլեջը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Քոլեջը շարունակաբար բարելավում է կրթական ծրագրերը՝ համադրելով աշխատաշուկայի պահանջների հետ: 2022-2023 ուսումնական տարվանից ներդրվել է մոդուլային ուսուցման համակարգ, որը նպաստում է ուսումնական գործընթացի արդիականացմանն ու գործնական հմտությունների ձևավորմանը:

Քոլեջն ապահովված է անհրաժեշտ որակավորում ունեցող դասախոսական կազմով՝ ներգրավելով նաև բուհերի դասախոսներին և ոլորտի պրակտիկ մասնագետներին: Քոլեջում գործում են

դասախոսական կազմի գնահատման մեխանիզմներ, քոլեջն ապահովված է կայուն դասախոսական կազմ, ձևավորվել է մասնագետների ռեզերվ, և առկա է երիտասարդացման դինամիկ միտում:
Ուսումնական հաստատությունն ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, որը շարունակաբար բարելավվում է: Բուհի և գործատուների ռեսուրսների համատեղ կիրառումը օժանդակում է կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը***

2023 թվականից Քոլեջն իրականացրել է ռազմավարական կառավարման բարեփոխումներ, ստեղծվել են նոր ստորաբաժանումներ: Բարելավման գործընթացն ուղղված է կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, գործառույթների հստակեցմանը և ստորաբաժանումների միջև աշխատանքային գործընթացների կանոնակարգմանը: Սակայն առկա են մարտահրավերներ՝ ստորաբաժանումների միջև համագործակցության պակաս, ռազմավարական պլանավորման բացթողումներ և տվյալահեն որոշումների թերություններ: Քոլեջի գործունեության արդյունավետության բարձրացման և կառավարման գործընթացների օպտիմալացման նպատակով անհրաժեշտ է ապահովել նրա ինքնավարությունը բուհից:
Որակի ապահովման համակարգի ինստիտուցիոնալացման ուղղությամբ իրականացվել են քայլեր՝ ձևավորվել է փաստաթղթային բազա, ներդրվել են մշտադիտարկման և բարելավման նախնական մեխանիզմներ: Այնուամենայնիվ, որակի ապահովման համակարգի լիարժեք և կայուն գործառնության ապահովման համար անհրաժեշտ է շարունակական աշխատանք՝ ներառելով ներքին գնահատման և մշտադիտարկման կառուցակարգերի ամրապնդում:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը***

Քոլեջի գործունեության մեջ կարևոր դեր ունի ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի զարգացումը և արտաքին կապերի ամրապնդումը: Սակայն հետազոտական բաղադրիչը կրթական ծրագրերում դեռևս սահմանափակ է, չեն գործում հետազոտական գործունեության խթանման մեխանիզմներ, և դասախոսների գիտահետազոտական աշխատանքների արդյունքները լիարժեքորեն չեն ներառվում ուսուցման գործընթացում:
Քոլեջն ունի հաստատված համագործակցային շրջանակ տեղական գործատուների հետ, ինչը նպաստում է ռեսուրսների համալրմանն ու համատեղ օգտագործմանը: Արտաքին կապերի հաստատման և խորացման համար մշակվել են ընթացակարգեր և կանոնակարգեր, սակայն դեռևս քայլեր չեն ձեռնարկվել քոլեջի գործընացների միջազգայնացման ուղղությամբ: Ուսանողների և դասախոսների միջազգային շարժունության ծրագրերին մասնակցության օրինակները բացակայում են, ինչը պահանջում է հետագա զարգացում:

5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման քոլեջի կողմից ներկայացված ծրագիրն իրատեսական է և ռիսկեր չի պարունակում: Իրականացման դեպքում կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1.Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարանին կից բազային քոլեջին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական

զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - Քոլեջի կառավարման համակարգի բարելավմանը և ինստիտուցիոնալ ինքնավարության ապահովմանը՝ ձևավորելով բուհից անկախ կառավարման մոդել,
   - ռազմավարական և կարճաժամկետ պլանների փոխկապակցվածության ապահովմանը,
   - որակի ներքին ապահովման համակարգի ամրապնդմանը՝կատարելագործելով որակի վերահսկման և բարելավման մշտադիտարկման մեխանիզմները,
   - նախագծային ուսուցման ներդրմանը և ընդլայնմանը բոլոր ՄԿԾ-ներում,
   - նախագծային ուսուցման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ապահովմանը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., մարտի 1